ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐԱԿՍՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 160 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……2

ԳԼՈՒԽ 1

1.1.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.2. Գործնական աշխատանքների դասակարգումը……3

ԳԼՈՒԽ 2. 2.1ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

2.1.**Գործնական մեթոդների կիրառությունը ուղղագրության ուսուցման Գործընթացում……7**

Եզրակացություններ ……..20

Օգտագործված գրականության ցանկ……21

Ներածություն

Գործնական աշխատանքները, ինչպես գիտենք, իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն մայրենի լեզվի ուսումնասիրման գործընթացում, այսօրինակ աշխատանքների միջոցով մենք հիմնավորում ենք տեսականում ձեռք բերած գիտելիքների հիմնական մասը իրենց հերթին խթանում են մի շարք կարևորագույն խնդիրների լուծմանը: Գործնական աշխատանքների կիրառման գործընթացում սովորողներին հնարավորություն է ընձեռվում զարգացնելու իրենց երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, գրագետ խոսք կառուցելու կարողությունները, նմանատիպ աշխատանքների արդյունքում նրանք կարողանում են գնահատել մարդկանց վարքագիծն ու արարքները, դրսևորել համապատասխան վերաբերմունք իրականության որոշակի փաստերի և երևույթների նկատմամբ: Գործնական աշխատանքների միջոցով կարելի է նաև միջառարկայական կապեր ստեղծել, ստեղծել նպաստավոր պայմաններ երեխաների սեփական կարծիքն արտահայտելու համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցի մայրենիի դասընթացի գործնական ուղղվածությամբ. I- IV դասարաններում լեզվական նախագիտելիքների և տարրական գիտելիքների ձեռքբերման անհրաժեշտության հիմնավորումով, գրագետ հաղորդակցման անհրաժեշտությամբ, մասնավորապես կարևոր խնդիր է գրավոր հաղորդակցության ունակությունը,

Նպատակն է մշակել և փորձարկել տարրական դասարաններում գործնական աշխատանքների ուսումնասիրման արդյունավետությանը նպաստող մեթոդական համակարգ:

Մեր նպատակներին հասնելու համար լուծել ենք հետևյալ **հիմնական խնդիրները.**

1. Ուսումնասիրել հայոց լեզվի մայրենիի առարկայական կրթական չափորոշիչները, պետական ծրագիրը, մայրենիի դասագրքերը, նրանց թեմատիկ պլանավորումները, մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդրի տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 1

1.1.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.2. Գործնական աշխատանքների դասակարգումը

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը , և ըստ դրա գործնական աշխատանքները բաժանվում են 3 հիմնական խմբի՝

- **վերարտադրողական** , որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու ՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը , /օրինակ ՝ պարզ առարկաների պատկերում , դրանց գունավորում, ևն /,
- **մասամբ որոնողական** , երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ , լուծի իրեն առաջադրված խնդիրը /օրինակ ՝ լույս ու ստվերի ընդգծում , գուներանգների օգտագործում/,
- **ստեղծագործական** , երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար ՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ /օրինակ ՝ ամբողջական պատկերի ստացում,նկարին տարածականության հաղորդում/ ։

II դասարանից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ,որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից: Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք,որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում,որտեղ անհրաժեշտ է հնարամտություն,ստեղծագործական մոտեցում,որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի առաջադրանքներից,որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության: Այսինքն՝ գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Այս դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն

յուրացրած գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը, այլև դպրոցականների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են՝

1. **դասակարգումը,**
2. **ամփոփումը,**
3. **տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,**
4. **իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,**
5. **միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,**
6. **տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,**
7. **ինքնաստուգումը:**

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2. Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց՝ մինչև այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները:
4. Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
5. Գործնական աշխատանքի ընթացքում ստացած արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
6. Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:
7. Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:
8. Գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը

9. Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործնեություն ծավալելու կարողությունը:

Երկրորդից չորրորդ դասարաններում, բացի ուսուցանող նպատակով տրված գործնական աշխատանքներից, տրվում են նաև միավորայի գնահատմամբ գործնական աշխատանքներ (յուրաքանչյուր կիսամյակում մեկ գործնական աշխատանք): Այդ գործնական աշխատանքների գնահատումն իրականացվում է՝ աշակերտի հավաքած միավորների քանակն արտահայտելով միավորայինգնահատանիշերով

10. Կրտսեր դպրոցականներին մաթեմատիկայից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ

2.1. Գործնական մեթոդների կիրառությունը ուղղագրության ուսուցման գործընթացում

Հոգեբանության և մանկավարժության ոլորտի մասնագետները ուսումնասիրություններից հանգել են այն եզրակացության, որ վերջին տարիներին երեխաները ձեռք են բերել յուրացնելու այնպիսի կարողություններ, որոնք առաջ հատուկ են եղել ավելի բարձր տարիքի աշակերտներին: Աշակերտների նոր հնարավորությունները մանկավարժների ու ծնողների առաջ խնդիր են դնում գտնել ավելի արդյունավետ ուղիներ այդ հնարավորություններն օգտագործելու և կատարելագործելու համար, այսինքն՝ աշակերտին հաղորդել ոչ միայն բնության ինչ-որ երևույթ, այլև տալ դրա ընդհանուր կապերը, նրանց մեջ դաստիարակել այնպիսի հետաքրքրություններ, հատկություններ, որոնք մախկինում հատուկ էին միայն ավելի բարձր զարգացման աստիճանի հասած տարիքի: Այդ հնարավորությունները պետք է օգտագործել նաև ուղղագրության ուսուցման ասպարեզում:

Ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության ուսուցման բազմաթիվ մեթոդներ և հնարներ կան, որոնցից առանձնահատուկ տեղ են գրավում գործնական և զննական մեթոդները:

Հայտնի է, որ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունն ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումն առանց աշակերտի անմիջական մասնակցության անհնար է: Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ: Դրանք նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ «եզակի» իրավիճակին:

Զննական ն գործնական մեթոդները համարվում են ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման և իրագործման մեթոդներ, գիտելիքներ,կարողություններ ու հմտություններ ձեռք բերող, իմաստավորող և ամրակայող մեթոդներ[28]:

Ուղղագրության ուսուցման շրջանում գործադրելի են հետևյալ զննական պարագաները, որոնցից ամեն մեկն ունի իր ուրույն խնդրներն ու նպատակները,և պետք է տեղին և ճիշտ օգտագործվի, որպեսզի պահանջված արդյունքը տա:

Ուղղագրությունը նկարներով: Զննական նյութերի այս համալիրը ներկայացնում է այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանող հնչյունով սկսվող բառ–առարկայի նկարը, որը ցուցադրվում է հնչյունային վերլուծություն կատարելուց առաջ և այդ վերլուծության համար հիմանական մեկնաբառդառնում: Սովորաբար վերցված են լինում առարկայական իմաստ արտահայտող այնպիսի բառեր, որոնց մեջ նոր ուսուցվող հնչյունը լսվում է բառասլզբում, սակայն լինում են նաև դեպքեր, երբ նոր ուսուցվող հնչյունը հանդես է գալիս բառավերջում կամ բառամիջում՝ նայած նպատակահարմարությանը:

Առարկայական նկարների պաստառներ: Այսպիսի զննական նյութեր կարող են պատրաստել բոլոր ուսուցիչները և օգտագործել ուղղագրական վերլուծությունների համար: Յուրաքանչյուր պաստառում կարող են ընդգրկվել մի շարք առարկայական նկարներ, որոնց անուններում բաղաձայն կամ ձայնավոր հնչյունն օգտագործված է բառասկզբում, բառամիջում ու բառավերջում: Այս պաստառների շուրջ տարվող

[30]Ա. Տեր-Գրիգորյան, հայոց լեզվի մեթոդիկա, Ե. 1980թ., էջ 120:

վերլուծական վարժությունները նպաստում են ինչպես բառերը ճիշտ գրելուն, այնպես էլ բառապաշարի հարստացմանը:

Գծային մոդելներ: Զննական նյութի մեջ առանձնահատուկ արժեք ունեն գծային մոդելները, որոնք մի կողմից լեզվական վերացական նյութը նյութականացնում են ու հասանելի դարձնում երեխաներին, իսկ մյուս կողմից նպաստում են երեխաների վերացական մտածողության զարգացմանը: Գծային մոդելները լայն գործադրություն ունեն ուղղագրության ուսուցման աշխատանքներում:

Այլ նյութեր: Ուղղագրության ուսուցման համար որպես զննական նյութ կարող են օգտագործվել ուղղագրական խաղերը, նկարներով և պատկերներով քարտերը, գրավոր հանձնարարությունների անհատական քարտեր, ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներ և այլն:

Չափազանց կարևոր է, որ խոսքային և զննական մեթոդները հանդես գան միասնաբար: Առարկան ու նրա անվանումը երեխան պետք է միասնաբար յուրացնի:

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ տապկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչն ուղեկցվում է պատկերներով:

Ցուցադրման մեթոդը զննականության դիդակտիկական սկզբունքի կենսագործման հիմնական ուղին է:

Կարելի է ցուցադրել որոշակի առարկա, առարկայի պատկերը, գծապատկերը: Բոլոր դեպքերում էլ ցուցադրումը պետք է լրիվ ու սպառիչ լինի: Սկզբում պետք է ցուցադրել առարկան ամբողջությամբ՝ ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու համար, հետո, երբ ամբողջի տպավորությունն ամրապնդված է, կարելի է անցնել հիմնական մասերի, այնուհետև երկրորդականներին, և վերջապես՝ մանրամասներին, մինչև որ առարկան ուսումնասիրվեի իր բոլոր կողմերով, իր հիմնական ու երկրորդական հատկանիշներով:

Գործնական մեթոդներ: Ուսուցման գործնական մեթոդների շարքին են դասվում վարժությունները: Բոլոր տեսակի վարժություններն իրենց բնույթով բաժանվում են գրավոր, բանավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային տեսակների: Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և

գործնական աշխատանք: Այսպես, օրինակ, աշակերտն իր ուսումնասիրած նյութը պատմում է, այսինքն՝ վարժվում է վերարտադրելու մեջ: Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են և՛ մտավոր, և՛ գործնական կողմերը: Աշակերտը գրավոր աշխատանքը կատարելու նպատակով նույնպես նախապատրաստվում է, այսինքն՝ կատարում է մտավոր աշխատանք, և ապա այն իրականացնում է գործնականորեն: Ուրեմն վարժությունների մեթոդները կիրառելիս մտավոր և գործնական աշխատանքները փոխկապակցվում են կանխանշած նպատակին հասնելու համար:

Բանավոր վարժությունը զարգացնում է սովորողների տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հիշողությունը, մտապահումը, խոսքի մշակույթը, կայունացնում է ուշադրությունը և հոգեկան այլ գործընթացները: Բանավոր վարժությունը տնտեսում է ժամանակը:

Գրավոր վարժությունը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների ամրապնդմանն ու կայունացմանը, ինչպես նաև նրանց կարողությունների ու հմտությունների մշակմանը:

Գրաֆիկական վարժությունները հնարավորություն են ընձեռում սովորողներին ավելի հեշտ և ավելի ճիշտ ընկալել ուսումնական նյութը: Զարգացնում է նրանց դիտունակությունն ու ուշադրությունը: Գրաֆիկական վարժություններից են զանազան սխեմաների, դիագրամների, գծագրերի, ալբոմների, պաստառների պատրաստումը և օգտագործումը:

Ուսումնական-աշխատանքային վարժությունների շարքին են դասվում հատկապես այն գործնական աշխատանքները, որոնք ունեն արտադրական նշանակություն: Այլ կերպ ասած՝ իրենց իրացրած գիտելիքները կիրառում ենաշխատանքային գործունեության մեջ:

Բացի վերը քննարկված վարժություններից՝ կան նաև մեկնաբանական վարժություններ, որոնց կատարումը հնարավորություն է ընձեռում սովորողներին իմաստավորել իրենց կատարած գործնական աշխատանքները, գործողությունները, կատարվող և կատարվելիք գործառույթները: Սովորողների կողմից գործադրվող մեկնաբանական մեթոդն օգնում է ուսուցչին արագորեն հայտնաբերել նրանց սխալները և հենց նույն պահին վերացնել դրանք:

Վարժությունների մեթոդների կիրառումն ուսուցչից պահանջում է կատարել հետևյալ աշխատանքները՝ առաջին՝ աշակերտներին պարզաբանել վարժության նպատակը, երկրորդ՝ ցույց տալ, բացատրել, թե ինչպես կատարել այս կամ այն վարժությունը, ինչ գործողություններ ծավալել, երրորդ՝ հետևել կատարման ընթացքին, չորրորդ՝ վերլուծել արդյունքները, նշել ուղիները՝ առաջիկայում սխալներից, թերություններից խուսափելու համար:

Մանկավարժը ճիշտ է նկատում, որ գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո:Գործնական մեթոդների շարքին են դասվում դիդատկտիկական խաղերը և մեթոդները: Գործնական մեթոդները, գործունեության տարբեր տեսակները կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ՝

1. Առաջադրանքի պլանավորում,
2. առաջադրանքի կատարում,
3. կատարման ընթացքի խթանում,
4. վերահսկողություն,
5. կատարած գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում[31]: Այսինքն՝ այս աշխատանքներն ունեն ընդհանրացնող բնույթ:

Ամենից առաջ պետք է նշանակալի տեղ հատկացնել բանավոր վարժություններին: Դրանք պետք է սկսվեն ուսուցչի կողմից նոր նյութը շարադրելուց և հարցերի միջոցով մութ կողմերը պարզաբանելուց հետո: Ուսուցիչը պետք է աշակերտներին հարցնի նոր շարադրած նյութը. սկզբում ուժեղներին, հետո՝ թույլերին, որպեսզի վերջիններս նյութը մի քանի անգամ լսելուց հետո կարողանան վերարտադրել:

Կարևոր նշանակություն ունեն նաև գրավոր վարժությունները: Դրանք պետք է սկսել գրաճանաչության ուսուցմանը զուգահեռ: Ինչը ձեռք է բերվում ընթերցանության ժամանակ, պետք է ամրապնդվի գրավորի միջոցով:

Զննական և գործնական մեթոդները փոխկապակցված են:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի զննական և գործնական մեթոդներ կան ուղղագրական դժվարությունները հաղթահարելու համար: Գործնական և զննական

[31] Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե. 2005, էջ 167-170:

մեթոդները սովորածը պարզելու հնարներ են, որոնք գործածվում են դասին համապատասխան:

Ուսումնական պրակտիկայի շրջանակներում մենք լսեցինք բավարար քանակությամբ դասեր, ընդ որում՝ հնարավորության դեպքում լսեցինք նաև այն ուսուցիչների մոտ, որոնք մեր պրակտիկայի ղեկավարներ չէին: Նպատակը ոչ միայն ավելի ծավալուն փորձառություն ձեռք բերելն էր, այլև աշխատառճերի բազմազանությունն ուսումնասիրելը: Այս ընթացքում մենք համոզվեցինք, որ յուրաքանչյուր դաս, ամեն դասարան, տարբեր են, այլև տարբեր են զուգահեռ դասարաններում պարապող ուսուցիչների դասերը, հետևաբար մեթոդները, հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Սխալ է այն դիտարկումը, թե այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում կարող ենք հասնել մեր առջև դրված նպատակին: Օրինակ՝ մենք հառզվեցինք, որ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե բոլոր աշակերտներն էլ ակտիվ են, սակայն մնացորդային գիտելիքների մակարդակն այլ բան է վկայում: Ուրեմն ուսուցման մեթոդները չպետք է ընկալել իբրև դեղատոմս:

Ուսուցողական արժեքով օժտված են զննական և գործնական մեթոդների համատեղ գործածությունները, և ընդհանրապես՝ դասի տարբեր փուլերում տարբեր մեթոդներ ու հնարներ կարելի է կիրառել: Օրինակ՝ տպավորիչ էր նկար- վարժությունը՝ նվիրված ձայնավորների ուղղագրությանը.

1. Եկե՛ք տնակները «բնակեցնենք» օ և ո տառերով՝





Կամ նույն մոտեցմամբ կարելի է բառաշարք տալ՝ բաց թողնված տառերով և հանձնարարել լրացնել դրանք և տեղավորել համապատասխան տնակում: Այդ նույն հանձնարարությունը կարելի է տալ է-ե ձայնավորների, նաև -և, եվ-ի գրությունն ու արտասանությունը սովորեցնելիս, նաև ստուգելիս:

Այսպիսի մոտեցումներով մենք ևս կազմեցինք պատկեր-վարժություններ բաղաձայնների ուղղագրությունն ուսուցանելիս, ապա ամփոփելիս և ստուգելիս: Նշենք, որ աշակերտները սիրով և պատասխանատվությամբ կատարեցին նմանատիպ վարժությունները: Օրինակ՝ քառաբաժանի կենտրոնում գրվում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկվում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը և այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարված պատկեր, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի նախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում յադհասկացությանը:

Պատկերված է խաղողի որթը, տրված է նաև կանոնը: Ուսուցանելիս ուսուցչի օգնությամբ լրացվում են սյունակները:

Ր-ից հետո լսվող թ-ն գրվում է թ:	
Որթ, հորթ	որդ

Այս մոտեցմամբ կարելի է հետաքրքիր վարժություններ կազմակերպել բոլոր բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ: Արդյունավետ կարելի է կիրառել նաև «Գիտելիքի դոմինո»: Այն հարմար է ամփոփելիս:

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 – Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 – Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում են վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Ահա հարցերը, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

Ինչո՞վ են ուղղագրական կանոններն իրար նման: Ո՞րն է նյութի հիմնականգաղափարը: Ո՞րոնք են ուղղագրության ուժեղ և թույլ կողմերը:Ինչպե՞ս ենուղղագրական կանոնները կապված միմյանց հետ: Համեմատե՛ք հայերենի ուղղագրական առանձնահատկությունները՝ըստ լեզվի հնարավորությունների: Որո՞նք են ուղղագրական դժվարությունների հաղթահարման տարբերակները: Մեթոդական գրականության մեջ առաջարկվում է օգտագործել մետաիմացության թերթիկը:

Այս թերթիկը լրացնելիս կատարե՛ք հետևյալ չորս քայլերը՝

1. Ընթերցե՛ք հարցերը:Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:

2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:

3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «՞» նշանը։

4.Ստուգե՛ք արդյոք ճի՞շտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել[32]։

Եվ այս շարքը կարելի է շարունակել, որոնք բոլորն էլ տալիս են հնարավորություն ուսուցչին պարզելու աշակերտների ունեցած գիտելիքներն արդենսովորած թեմայից։ Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ զննական և գործնական մեթոդները կիրառվում են հիմնականում արդեն աշակերտներին տրված թեմայից հետո երեխաների գիտելիքների ստուգման համար որպես լավագույն տարբերակ։

ետք է նշել, որ չնայած գիտության զարգացման և տեխնոլոգիաների կիրառության ծավալին՝ այս ժամանակաշրջանում բավականին կիրառելի են նաև ավանդական մեթոդները, որոնց համադրումը ժամանակակից մեթոդների հետ կարող է բավական լավ արդյունքի հանգեցնել։

Պրակտիկայի ընթացքում մեթոդիստի և կցված ուսուցչի խորհուրդները հաշվի առնելով և ուսումնասիրելով համապատասխան մեթոդական գրականությունը՝ կազմեցինք վարժությունների համակարգեր և՛ ձայնավոր, և՛ բաղաձայն հնչյունների ուղղագրության վերաբերյալ, որոնց մի մասն օգտագործեցինք բավականհաջողությամբ։

Ահա մի քանիսը։

Ավելացրո՛ւ օժանդակ բայեր ձևաբայերին և՛ դրական, և՛ ժխտական ձևերով, և՛ ներկա, և՛ անցյալ ժամանակներով։

Ձայնավորների ուսուցումը նկար-բառերով.

Օրինակ՝ Կարող եք առանձին քարտերի վրա պատկերել նկարներ և աշակերտներին առաջարկել՝

1.1. Գտնել ձայնավորով վերջացող նկար-բառերը, գտած ձայնավորները կիրառել այլ բառերի մեջ։
1.2. Հանձնարարել աշակերտներին որոշել ձայնավոր հնչյունով սկսվող տրված նկար-բառերը, ապա նշել «ավելորդ» բառը։
1.3. Նշի՛ր՝ նկար-բառերից ո՞րն ունի երկու ձայնավոր հնչյուն։

1.4. Գտի՛ր՝ որ տնակում «բնակվող» բոլոր նկար-բառերն են վերջանում ձայնավորորվ:

1.5. Գտի՛ր՝ որ շարքի նկար-բառերն են սկսվում միևնույն ձայնավորներով:

1.6. Գտի՛ր՝ ո՞ր գնացքով են «ճանապարհորդում» միայն երեք ձայնվոր ունեցող բառերը:



Նաև՝

1. Է,ս, ի, տ, լ, ու, մ, օ, կ, ը, ա հնչյուններից որո՞նք են ձայնավորներ:
2. Ձայնավոր հնչյունները փոխելով՝ ստացի՛ր նոր բառեր:

   Պատ, դար, սար, բառ, տող, տուն, վարք, վիզ, հարկ, գարի, կարճ:

   Պետ, դեր, սեր, բեռ, տեղ, տոն, վերք, վազ, գերի, կիրճ:
3. Շարունակի՛ր շարքը, գրի՛ր ձայնավորով վերջացող երեքական բառ: Օրինակ՝ գարի, կատու, ուսուցչուհի, այո, բարի:
4. Ձայնավորով սկսվող ու վերջացող հինգ բառ գրի՛ր:

   Ուսուցչուհի, այո, Անի, այգի, ընծա:
5. Միևնույն ձայնավորով վերջացող հինգ բառ գրիր:

   Արինա, Արա, Աննա, Ալինա /հատուկ անուններ/

   Իննամյա, ապա, անխնա, երեխա, երկաթյա:

Սովորում ենք դասը դասարանում և կատարում ենք վարժություններ:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ): Դասը սկսելու շաա հայտնի հնար է ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով

«ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին»։ Ապա լրացվում է Գիտեմ սյունակը։ Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին։Եվ լրացնում է Ուզում եմ իմանալ սյունակը։ Դասի վերջում լրացվում է Սովորեցի սյունակը։

Դաս սովորելու այս մեթոդն ավելի հիշվող է, երեխաները միանգամից սովորում են և՛ դասը, և՛ կատարում են դասին համապատասխան վարժություն։

Խմբային վարժություններ

Խաղեր խաղալ սիրում ենք բոլորս։ Յուրաքանչյուր տարիքային փուլումմարդուն մի խաղի ձև է հրապուրում։ Նախադպրոցական սաները խաղում են խաղալիքներով, տալիս նրանց անուններ, ստեղծում իրավիճակներ ու այդ խաղալիքներին ներգրավում դերերի մեջ, կրտսեր դպրոցականները նախընտրում են մրցույթներ, դեռահասները սիրում են խաղեր, որտեղ հստակ կանոններ կան։ Իրականում խաղի բազմաթիվ տեսակներ կան, պարզապես ճիշտ ընտրություն է պետք կատարել։ Կրտսեր դպրոցականների նախասիրություններն ուսումնասիրելով՝ կարելի է հասկանալ, որ անգամ ամենաբարդ թեման, տեքստը կարելի է խաղով սովորեցնել։ Ահա այստեղ շատ կարևոր է մշակման ու մատուցման ձևը։ Նաև անհրաժեշտ է ընտրել, թե խաղը խմբային համագործակցային է լինելու, թե անհատական։ Սա ևս կարևոր է։ Անդրադարձ կատարենք խմբային մրցակցային ու ոչ մրցակցային ստեղծագործական խաղերին։ Ցանկացած խմբային խաղ սկսելուց առաջ նախաբան է անհրաժեշտ՝ կանոնները յուրացնելու համար։ Այնուհետև պետք է տվյալ թիմի համար սահմանել դրույթներ, որպեսզի խաղի ընթացքում դրանք չխախտվեն, ապա պետք է բացատրել խաղի կանոններն ու խաղալ։ Որպես դասակարգում՝ կարելի է ասել, որ խմբային խաղը կարող է լինել մրցակցային և ոչ մրցակցային, զարգացնող, լիցքաթափող, ժամանցային։ Եվ ի վերջո, խաղերը նպաստում են սովորողների հոգեբանական, ինտելեկտուալ զարգացմանը, հաղորդակցման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը։ Ներկայացնենք խաղային մի քանի վարժություններ։

Օրինակ՝ Սիրելի՛ ընկեր, քեզ մաղթում եմ ամենա...

Սա հաղորդակցման զարգացմանն ուղղված խաղ է։ Այս խաղը մրցակցային չէ, չկան միավորներ, և մեծ խումբը ենթախմբերի չի բաժանվում։ Խաղն առավելներգործում է

զգացմունքային դաշտի վրա: Ձայնավորների վերաբերյալ վարժություններ կատարելիս այն կարող է տալ լավ արդյունք թեման յուրացնելու համար: Վարժությունը տրվում է ամբողջ դասարանին և մեկը մյուսի հետևից փորձում են գտնել հարցաթերթիկի վրա գրված առաջադրանքների պատասխանները, հաջորդ մասնակիցը կարող է ուղղել նախորդ մասնակցի սխալը կամ կարող է առաջարկել իր տարբերակը: Այս տարբերակով ուսուցիչը կարող է իմանալաշակերտների գիտելիքները, արձանագրել երեխաների սխալները և ուղղել դրանք: Հարցերը կարող են լինել հետևյալները .

1. Որո՞նք են ձայնավոր հնչյունները . թվարկի՛ր:
2. Ուղղագրական առանձնահատկությունները ո՞ր ձայնավորներն ունեն:
3. Ի՞նչ գիտես ե-է տառերի և հնչյունների ուղղագրության մասին:
4. Ուղղախոսական ի՞նչ առանձնահատկություն ունի –ե- տառ-հնչյունը:
5. Զույգերով հանդես եկող ուրիշ ի՞նչ ձայնավորներ գիտես:
6. Ի՞նչ ուղղագրական-ուղղախոսական առանձնահատկություն ունի –ը- ձայնավորը:

Ես-դու-մենք[33]:

Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետնում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը: Առաջադրանքները գրվում են քարտերի վրա, որոնք վերաբերում են ձայնավորներին, օրինակ՝ Տվյալ բառերի ձայնավորները փոխարինի՛ր մեկ այլ ձայնավորով այնպես, որ ստացվի նոր բառ:

Բառերն են՝ բեր, գիր, սուր, տեր, գոլ: Կարելի է տարբեր շարքեր կազմել:

Գտի՛ր ձայնավորով սկսվող և վերջացող բառերը և տվյալ ձայնավորը կիրառի՛ր այլ բառեր ստանալու համար:

[33]Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ,Հայաստան, 2020, էջ 39:

Բառերը՝ ձու, սեղան, ամպ, ամառ, գրիչ, աստղ, տանձենի, բերրի, մրրիկ, ոսկոր, արև, ինքնաթիռ, արմատ:

Նշի՛ր բառերի ավելորդ ձայնավորը:

1. Բառերն են՝ մարդդ, բաժակի, անեգութ, թավիշյա, մրուջյուն, սայուն, գօրական, մանրէէ, շուքեղ, լուսավորի, մասենակի, ընետանիք:

2. Բաց թողած տեղերում լրացրու Է կամ Ե. այժմ-ական, ամենա-ական, ան-րկյուղ, առ-ընույթ, առ-ջ, բազկ-րակ, գետ-զր, գոմ-շ. դող-ոոցք, ելն-ջ, եղեր-ոգ, երբե-, -լեկտրա-ռակցել, -մ, ինչնից-, մանր-, հն-աբան,

մանր-աբան, չ-ն, չ-իր, որն-, չ-ինք, ստոր-ոկրյա, և-թ, ափս-, տն-տուն, առօր-ական:

3. Բաց թողած տեղերում լրացնել Օ կամ Ո. ականջ-ղ, ամեն-ոյա, այդ-ոինակ, այս-ր, անդ-ոոություն, ան-թ, ան-ղնաշար, ան-ղ-ք, ան-ոակ, ան-գտակար, ապ-ոինի, բարձր-ոակ, բար-ոություն, գիշերուզ-ր, դեղնազ-ծ, երկար-ոյա, եղբ-ր-ոդի, հն-ոյա, քնքշ-ոեն, -թ-ց, -ոըստ-ոե, -ր-ցք:

4. Անհրաժեշտ տեղերում լրացնել Ը. ակ-նբախ, ամենա-նդունակ, այլ-նտրանք,առ-նթեր, գահ-նկեց, գիրկ-նդխառն, գործ-նկեր, գույ-նզգույն, երկ-նչել, զուգ-նթաց, թր-խկ, լուս-նկա, հյուր-նկալ, ձեռ-ետու, մակ-նթաց:

Այսպիսով, ուսումնասիրելով թեման, կատարելով համեմատությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ անկախ դժվարություններից՝ ժամանակակից գիտությունն առաջարկում է այնպիսի մեթոդիկաներ, հնարներ և վարժություններ, որոնք կարող ենք համադրել ավանդական մեթոդների հետ, որոնց գործածությունը բերում է ցանկալի արդյունքի: Հիմքը միանշանակ գործնական աշխատանքն է, և աշակերտների ունակությունները լարժեք իմանալը, քանզի առավել ուժեղ աշակերտին դասը բացատրում և հարցնում են առաջինը իսկ ավելի թույլ աշակերտին հնարավորություն է տրվում լսել թեման մի քանի անգամ:

Կռահի՛ր՝ որ տառով է ավարտվում առաջին բառը և սկսվում երկրորդը: Գտի՛ր այդ բառը:

ա/ Գևոր-

բ/ - արիկ

1. Անգետիկը գրատախտակին գրել է մի քանի բառ: Գրի՛ր՝ քանի բառ է սխալ գրել Անգետիկը:



Եզրակացություններ

Մեր հետազոտական աշխատանքի կատարման արդյունքում եկանք հետևյալ եզրահանգմանը.

Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից մեկն է: Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում գործնական աշխատանքների ներառումը.

1. Գործնական աշխատանքների կազմման ժամանակ պետք է հաշվի առնել դասարանի աշակերտների գիտելիքների մակարդակը և յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները:

2. Վարքագծով ակտիվ աշակերտներին, ովքեր մայրենիի դասի նկատմամբ չունեն բավարար հետաքրքրություն, գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս առարկան տեսնել այլ կողմից և հետաքրքրությամբ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նաև ուսումնական գործընթացում:

3. Գործնական աշխատանքների միջոցով երեխաների մոտ ակտիվություն առաջանալուն զուգահեռ նվազում է նրանց թերարժեքության բարդույթը:

5. Գործնական աշխատանքը ուսուցումը կյանքին կապող լավագույն միջոց է: Մայրենիի ուսուցման արդունավետության բարձրացմանը նպաստում է մեթոդական համակարգի հարստացումը այնպիսի գործնական աշխատանքներով, որոնց օգնությամբ գործողությունները վերացական ձևերի մակարդակից փոխադրվում են պատկերային ընկալումների մակարդակ՝ միաժամանակ ստանալով հստակ ձևակերպումներ: Գործնական աշխատանքների կազմակերպումը և արդյունավետությունը որոշակիորեն կախված են նաև ուսուցչի պատրաստվածության մակարդակից:

6. Գործնական աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու վանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Ա. Սահակյան, Մանկավարժություն, Ե. , 2005:
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, «Էդիթպրինտ» հրատ. , Ե. , 2010:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե. , «Զանգակ» հրատ., 2018:
4. Եզեկյան Լ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատ. , Ե. , 2005:
5. Թորոսյան Կ., Հ. Խաչատրյան, Վ.Ա. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Մայրենի 4, «Մանմար» հրատ. , Ե. , 2016:
6. ԹորոսյանԿ., Հ. Խաչատրյան, Վ. Ա. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Մայրենի 4, «Մակմիլան Արմենիա» հրատ. Ե. , 2009:
7. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտհիմն. ,Հայաստան, 2020:
8. Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Ե. , 1947:

Սուքիասյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու /Հնչյունաբանություն,բառագիտություն, բառակազմություն/, Երևանի համալսարանի հրատ. , Ե. , 1999

8 Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան<< Գործնական աշխատանքներ մայրենիից>>,<> հրատարակչություն,2017թ.

9. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան<< 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար>>: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ:

школа .- 2002.- No5 .- С. 73-79.